ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
**Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

26.09.2025թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. օրենքի նախագիծը,

2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը,

3. գործող օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ տեղեկանքը:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Սերգեյ Բագրատյան

Խնդրում եմ օրենքի նախագծի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆ

ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19.6-րդ հոդվածի 15-րդ մասում «29-ապատիկի» բառը փոխարինել «55-ապատիկի» բառով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա ստանալու նպատակով ներկայացվող հայտերի մասով ծագած հարաբերությունների նկատմամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 19.6. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ապրանքներ արտահանելու և (կամ) ներմուծելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար պետական տուրքի դրույքաչափերը**

| | |
|---|---|
| 1. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ երրորդ երկրներից ներմուծելու և (կամ) երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար | բազային տուրքի չափով, եթե սույն օրենքով այլ դրույքաչափ նախատեսված չէ |
| 2. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի)՝ «Բացթողում ներքին սպառման համար», «Վերամշակում մաքսային տարածքում» և «Վերամշակում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար | բազային տուրքի 800-ապատիկի չափով |
| 3. *(մասն ուժը կորցրել է 05.10.22 ՀՕ-359-Ն)* | |
| 4. *(մասն ուժը կորցրել է 15.06.22 ՀՕ-150-Ն)* | |
| 5. *(մասն ուժը կորցրել է 15.06.22 ՀՕ-150-Ն)* | |
| 6. *(մասն ուժը կորցրել է 15.06.22 ՀՕ-150-Ն)* | |
| 7. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7206 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների | բազային տուրքի 110-ապատիկի չափով |
| 8. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7207 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների | բազային տուրքի 110-ապատիկի չափով |
| 9. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7224 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման | բազային տուրքի 110-ապատիկի չափով |

| | |
|---|---|
| լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների | |
| 10. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7403 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների | բազային տուրքի 400-ապատիկի չափով |
| 11. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7601, 7603 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների | բազային տուրքի 300-ապատիկի չափով |
| 12. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7108 ծածկագրին դասվող ապրանքների (բացի Հայաստանի Հանրապետության ծագման ոսկի պարունակող համաձուլվածքներից և խտանյութերից) յուրաքանչյուր մեկ կիլոգրամի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների | բազային տուրքի 180-ապատիկի չափով |
| 13. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրին դասվող պլատինե ապրանքների (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պլատին պարունակող համաձուլվածքներից և խտանյութերից) յուրաքանչյուր մեկ կիլոգրամի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների | բազային տուրքի 90-ապատիկի չափով |
| 14. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրին դասվող պալադիումե ապրանքների (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պալադիում պարունակող համաձուլվածքներից և խտանյութերից) յուրաքանչյուր մեկ կիլոգրամի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների | բազային տուրքի 105-ապատիկի չափով |
| 15. «ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7214 և 7215 ապրանքային դիրքերին դասվող պողպատե | բազային տուրքի 55 ապատիկի չափով |

Deleted: 29

Deleted: -

| | |
|---|---|
| ամրանների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար | |

***(19.6-րդ հոդվածը լրաց. 12.05.16 ՀՕ-79-Ն, 26.05.21 ՀՕ-243-Ն, խմբ. 15.****07.21 ՀՕ-310-Ն, խմբ., փոփ. 05.10.22 ՀՕ-359-Ն, փոփ. 15.06.22 ՀՕ-150-Ն, լրաց. 12.04.24 ՀՕ-146-Ն, 07.02.24 ՀՕ-85-Ն, փոփ. 29.05.25 ՀՕ-122-Ն, լրաց. 03.07.25 ՀՕ-232-Ն)*

*(26.05.21 ՀՕ-243-Ն **օրենքն ունի անցումային դրույթ)***

***(15.****07.21 ՀՕ-310-Ն* ***օրենքն ունի անցումային դրույթ)***

***(29.05.25 ՀՕ-122-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

### 1. Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի անհրաժեշտությունը

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում մշակող արդյունաբերության գերակա ճյուղ համարվող ծանր արդյունաբերության խթանման, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (սև մետաղների) արտադրության և ներքին առևտրի կանոնակարգման անհրաժեշտությամբ:

Նպատակ ունենալով զարգացնել առավել բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրությունն ու հումքային ռեսուրսների ներքին սպառումը, տեղում սև և գունավոր մետաղների ջարդոնի վերամշակման, թափոններից մետաղների կորզման և առավել բարձր ավելացված արժեքով արտադրանքների արտադրության խթանմանը՝ ՀՀ կառավարությունը մի շարք որոշումներով արգելել է սև և գունավոր մետաղների ջարդոնի և թափոնների արտահանումը, ինչպես նաև սահմանափակել է սև մետաղից պատրաստված պարզ և ցածր ավելացված արժեք ունեցող որոշ ապրանքների արտահանումը:

Դրա հետ մեկտեղ, 2024 թվականին «Պետական տուրքի մասին» օրենքում կատարվեց լրացում (հոդված 19.6, մաս 15), համաձայն որի՝ «ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7214 և 7215 ապրանքային խմբերին դասվող պողպատե ամրանների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր

մինչև մեկ տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար սահմանվեց պետական տուրք բազային տուրքի 29-ապատիկի չափով:

Թվարկված քայլերի արդյունքում ապահովվեց հավասար մրցակցային պայմաններ տեղական արտադրողների և երրորդ երկրներից ներմուծվող նույնանման ապրանքների միջև, ավելի գրավիչ դարձավ Հայաստանի մետալուրգիական և մետաղամշակման ոլորտը, որի արդյունքում կատարվեցին մեծաքանակ ներդրումներ և ստեղծվեցին նոր արտադրություններ կամ ընդլայնվեցին գործողները, պարզ արտադրանքից անցում կատարելով դեպի բարդ, առավել բարձր ավելացված արժեքով ապրանքների արտադրությունը, ինչը համահունչ է հանրապետությունում մետալուրգիական ոլորտի ռազմավարական զարգացման տեսլականին: Մասնավորապես, նախաձեռնվեցին տեղական մետաղական ձողերի և շինարարական ամրանների արտադրությունը, որը նախկինում միայն ներմուծվում էր: Ներկայումս ներմուծման հետ զուգահեռ, նաև տեղում արտադրվում են ամրաններ: Տեղի ունեցավ ներմուծման փոխարինում և նվազեցրեց տնտեսության կախվածությունը ներմուծումից:

Սակայն, իրանա-իսրայելական հակամարտությունից հետո, պայմանավորված իրանական արժույթի անկմամբ, իրանական շուկայում կտրուկ նվազեցին ամրանների գները (մոտ 35 հազ. դրամով մեկ տոննայի համար, ինչն, ըստ մեզ, բացատրվում է իրանական ռիալի արժեզրկմամբ), որի արդյունքում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առավել ցածր գներով ամրանների ներմուծման համար:

Արդյունքում, ներքին շուկայում ստեղծվեցին անհավասար մրցակցային պայմաններ տեղում արտադրվող և ներմուծվող ամրանների համար, որը խիստ բացասական ազդեցություն ունի մեծաքանակ ներդրումներ կատարած ներքին արտադրողների ֆինանսատնտեսական գործունեության վրա և արտադրանքի սպառման բացակայության պայմաններում՝ կհանգեցնի ընդհուպ մինչև ձեռնարկության գործունեության դադարի:

Հաշվի առնելով վերը նշված համգամանքները՝ առաջարկվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածով սահմանված՝ լիցենզիայի տրամադրման պետական

տուրքը բազային տուրքի 29-ապատիկի փոխարեն սահմանել 55-ապատիկի չափով, ինչը կհավասարակշռի ամրանների ներքին շուկայում ներմուծվող և արտադրվող ամրանների մրցակցային պայմանները և կստեղծի բարենպաստ պայմաններ առողջ մրցակցության համար:

## 2. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Ներքին շուկայի ու տեղական արտադրության պաշտպանություն: Տեղական մշակող արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի բնականոն գործունեության ապահովում և արտադրանքի մրցունակության բարձրացում:

## 3. Կարգավորման նպատակը և բնույթը

Տեղական արտադրության զարգացում, ներմուծման փոխարինում և հավասար մրցակցային պայմանների ապահովում:

## 4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ԱԺ պատգամավորների և ՀՀ կառավարության կողմից:

## 5. Ակնկալվող արդյունքը

Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտա շուկայավարման մեխանիզմներով ապահովել հավասար պայմաններ մետաղական ձողերի և շինարարական ամրանների արտադրությամբ և ներմուծմամբ զբաղվող տնտեսվարողների միջև:

## 1. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 18.11.2021թ. N 1902-Լ որոշմամբ

հաստատված պահանջներից և ապահովում է Հավելված 1-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 5.4-րդ և 5.5-րդ կետով սահմանված դրույթների շարունակականությունը, այն է՝ մի շարք ապրանքատեսակների մասով հայրենական արտադրողների համար առավել նպաստավոր պայմանների ապահովում և ներքին շուկայի պաշտպանության քաղաքականության մշակում:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացման մասին**

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում չի նախատեսվում: